

4.2. Ա Պ Ր Ա Ն Զ Ն Ե Ր Ի Ա Ր Տ Ա Հ Ա Ն Ո Ւ Մ Ե Վ Ն Ե Ր Մ Ո Ւ Ծ Ո Ւ Մ

4.2.1. Արտաքին առևտուր

Արտաքին առևտրաշրջանառությունը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2012թ. հունվար-մարտին, փաստացի գներով, կազմել է 28592.2 մլն դրամ կամ 73609.7 հազար ԱՄՆ դոլար (հետախոս՝ հազ. դոլար), այդ թվում՝ ապրանքների արտահանումը՝ 4461.2 մլն դրամ (11485.1 հազ. դոլար), իսկ ներմուծումը՝ 24131.0 մլն դրամ (62124.6 հազ. դոլար): Առևտրային հաշվեկշիռը բացասական է 19669.8 մլն դրամով (50639.5 հազ. դոլարով):

2012թ. հունվար-մարտին 2011թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արտաքին առևտրաշրջանառության ծավալը նվազել է 5.8 տոկոսով*, ընդ որում՝ արտահանումը նվազել է 40.3 տոկոսով, իսկ ներմուծումը աճել է 5.5 տոկոսով: Բացասական առևտրային հաշվեկշիռը աճել է 27.8 տոկոսով: Առանց հաշվի առնելու վերաարտահանման** բնույթ ունեցող ապրանքատեսակները, 2011թ. հունվար-մարտի համեմատ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը նվազել է 8.6 տոկոսով, ընդ որում արտահանումը՝ 47.1 տոկոսով, իսկ ներմուծումը աճել է 3.7 տոկոսով:

ԼՂՀ արտաքին առևտրաշրջանառությունը 2012թ. հունվար-մարտին ըստ առանձին երկրների

Երկրի անվանումը	Արտահանում					Ներմուծում					Առևտրային հաշվեկշիռը
	2011թ. հունվար-մարտ	Տեսակարար կշիռը (%)	2012թ. հունվար-մարտ	Տեսակարար կշիռը (%)	աճի տեմպը, %	2011թ. հունվար-մարտ	Տեսակարար կշիռը (%)	2012թ. հունվար-մարտ	Տեսակարար կշիռը (%)	աճի տեմպը, %	
<i>Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը</i>	19253.4	100.0	11485.1	100.0	59.7	58866.0	100.0	62124.6	100.0	105.5	-50639.5
այդ թվում՝											
ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ	18356.0	95.3	9783.5	85.2	53.3	56230.9	95.5	58667.7	94.5	104.3	-48884.2
այդ թվում՝											
Հայաստանի Հանրապետություն	17924.5	93.1	9264.6	80.7	51.7	55988.6	95.1	57783.7	93.0	103.2	-48519.1
Ռուսաստանի Դաշնություն	431.5	2.2	518.9	4.5	120.3	115.4	0.2	277.5	0.5	240.5	241.4
Բելոռուս	-	-	-	-	-	88.3	0.1	468.2	0.8	5.3	-468.2
Ուկրաինա	-	-	-	-	-	38.6	0.1	-	0.0	-	-
Ղազախստան	-	-	-	-	-	-	-	138.3	0.2	-	-138.3
ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐ	897.4	4.7	1701.6	14.8	189.6	2635.1	4.5	3456.9	5.5	131.2	-1755.3
այդ թվում՝											
ՄԱԷ	-	-	-	-	-	738.2	1.3	89.0	0.1	12.1	-89.0
Միացյալ Թագավորություն	743.8	3.9	1701.5	14.8	2.3անգ	674.7	1.1	1682.9	2.7	2.5անգ	18.6
Չինաստան	-	-	-	-	-	260.5	0.4	260.0	0.4	99.8	-260.0
Թուրքիա	-	-	-	-	-	256.3	0.4	863.2	1.4	3.4անգ	-863.2
Միացյալ Նահանգներ	-	-	-	-	-	213.2	0.4	78.8	0.1	37.0	-78.8
Լիբանան	-	-	-	-	-	201.7	0.3	65.2	0.1	32.3	-65.2
Ֆրանսիա	152.0	0.8	-	-	-	106.9	0.3	6.6	0.0	6.2	-6.6
Կորեայի ԺԺՀ	-	-	-	-	-	95.4	0.2	-	-	-	-
Ճապոնիա	-	-	-	-	-	40.7	0.1	-	-	-	-
Նիդերլանդներ	-	-	-	-	-	25.2	0.0	11.8	0.0	46.8	-11.8
ԻհՀ	-	-	-	-	-	11.2	0.0	103.1	0.2	9.2անգ	-103.1
Պորտուգալիա	-	-	-	-	-	9.0	0.0	-	-	-	-
Գերմանիա	-	-	-	-	-	2.1	0.0	-	-	-	-
Սլովակիա	-	-	-	-	-	-	-	38.3	0.1	-	-38.3
Վերջինյան Կողմեր	-	-	-	-	-	-	-	234.5	0.4	-	-234.5
Իտալիա	1.6	0.0	0.1	0.0	6.2	-	-	23.5	0.0	-	-23.4

2012թ. հունվար-մարտին ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 26588.4 մլն դրամ (68451.2 հազ. դոլար) կամ ընդհանուր ապրանքաշրջանառության 93.0 տոկոսը, իսկ այլ երկրների հետ՝ 2003.8 մլն դրամ (5158.5 հազ. դոլար) կամ 7.0 տոկոսը:

* Համեմատությունը կատարվում է ԱՄՆ դոլարով:

** Վերաարտահանումը ներմուծված ապրանքների այնպիսի արտահանում է, որոնք երկրի սահմանն անցել են տվյալ պետությունում վերաձևակերտվելու և հետագայում սկզբնական առաքիչ երկրի վերադարձնելու նպատակով (կնքված պայմանագրերի հիման վրա և սահմանված վճարի դիմաց): Այս խմբի ապրանքների վրա սեփականության իրավունքը չի անցնում մի սեփականատերից մյուսին:

ԱՐՏԱԹԻՆ ՀԱՏՎԱԾ


ԱՊՀ երկրներ են արտահանվել 3800.1 մլն դրամի (9783.5 հազ. դոլարի) և այդ երկրներից ներմուծվել՝ 22788.3 մլն դրամի (58667.7 հազ. դոլարի) ապրանքներ: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 18988.2 մլն դրամով (48884.2 հազ. դոլարով):

Այլ երկրներ արտահանվել են 661.0 մլն դրամի (1701.6 հազ. դոլարի) և այդ երկրներից ներմուծվել՝ 1342.8 մլն դրամի (3456.9 հազ. դոլարի) ապրանքներ: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 681.8 մլն դրամով (1755.3 հազ. դոլարով):


2012թ. հունվար-մարտին արտահանման ծավալի 85.2 տոկոսն ուղղվել է ԱՊՀ երկրներ (որից՝ 94.7 տոկոսը՝ Հայաստանի Հանրապետություն և 5.3 տոկոս՝ Ռուսաստանի Դաշնություն), 14.8 տոկոսը՝ աշխարհի այլ երկրներ (գրեթե 100 տոկոսը Միացյալ Թագավորություն): Ներմուծման ծավալի 94.5 տոկոսը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին (որից՝ 98.5 տոկոսը՝ Հայաստանի Հանրապետություն, 0.8 տոկոսը՝ Բելոռուս, 0.5 տոկոսը՝ Ռուսաստանի Դաշնություն), իսկ 5.6 տոկոսը՝ այլ երկրներին (որից՝ 48.7 տոկոսը՝ Միացյալ Թագավորություն, 25.0 տոկոսը՝ Թուրքիա, 7.5 տոկոսը՝ Չինաստան, 6.8 տոկոսը՝ Վերջինյան Կղզիներ և այլն):

Արտահանման և ներմուծման ծավալները ըստ ԱՊՀ և այլ երկրների 2011-2012թթ. հունվար-մարտին

Արտահանում (հազ. ԱՄՆ դոլար)



Ներմուծում (հազ. ԱՄՆ դոլար)



Արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը

ԼՂՀ արտաքին առևտրաշրջանառությունը 2012թ. հունվար-մարտին ըստ ապրանքախմբերի

Ապրանքային խմբի անվանումը	Արտահանում			Ներմուծում			Հաշվեկշիռը, հազ. ԱՄՆ դոլար
	արժեքը		տեսակարար կշիռը (%)	արժեքը		տեսակարար կշիռը (%)	
	մլն դրամ	հազ. ԱՄՆ դոլար		մլն դրամ	հազ. ԱՄՆ դոլար		
Ընդամենը	4461.2	11485.1	100.0	24131.0	62124.6	100.0	-50639.5
<i>այդ թվում՝</i>							
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	99.2	255.3	2.2	1046.2	2693.5	4.3	-2438.2
Բուսական ծագման արտադրանք	178.4	459.4	4.0	1632.9	4203.8	6.8	-3744.4
Յուղեր և ճարպեր	-	-	-	207.0	532.8	0.9	-532.8
Պատրաստի սննդի արտադրանք	526.4	1355.2	11.8	4307.4	11089.1	17.9	-9733.9
Հանքահումքային մթերքներ	2499.0	6433.7	56.0	4772.2	12285.8	19.8	-5852.1
Քիմիական արտադրության ապրանքներ	9.4	24.1	0.2	1332.3	3429.9	5.5	-3405.8
Պլաստմասսա, կաուչուկ, ռետին	33.8	87.1	0.8	190.5	490.6	0.8	-403.5
Կաշի և դրանից իրեր	1.8	4.5	0.1	84.1	216.5	0.4	-212.0
Փայտ և փայտյա իրեր	101.0	259.9	2.3	162.5	418.3	0.7	-158.4
Թուղթ և թղթյա իրեր	-	-	-	152.3	392.2	0.6	-392.2
Մանածագործական իրեր	8.6	22.1	0.2	847.9	2183.0	3.5	-2160.9
Կոշիկեղեն, հովանոցներ, գլխարկներ	99.9	257.1	2.2	181.6	467.6	0.7	-210.5
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից:	15.5	39.9	0.3	1014.1	2610.8	4.2	-2570.9
Ապակի և դրանից իրեր	660.9	1701.5	14.8	722.5	1860.0	3.0	-158.5
Թանկարժեք քարեր և մետաղներ	99.9	257.3	2.2	612.1	1576.0	2.5	-1318.7
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	56.1	144.5	1.3	1813.7	4669.3	7.5	-4524.8
Տրանսպորտային միջոցներ	57.3	147.4	1.3	3367.2	8668.8	13.9	-8521.4
Սարքեր և ապարատներ	-	-	-	47.4	122.0	0.2	-122.0
Կահույք, խաղալիքներ, այլ պատրաստի իրեր	14.0	36.1	0.3	1636.7	4213.7	6.8	-4177.6
Արվեստի ստեղծագործություններ, հնաճ իրեր	-	-	-	0.4	0.9	0.0	-0.9

2012թ. հունվար-մարտին հանրապետությունից արտահանված ապրանքների ընդհանուր ծավալի 56.0 տոկոսը կազմել են հանքահումքային մթերքները, 14.8 տոկոսը՝ թանկարժեք քարեր և մետաղները, 11.8 տոկոսը՝ պատրաստի սննդի արտադրանքը, 4.0 տոկոսը՝ բուսական ծագման արտադրանքը: Ներմուծման մեջ 19.8 տոկոսը կազմել են հանքահումքային մթերքները, 17.9 տոկոսը՝ պատրաստի սննդի արտադրանքը, 13.9 տոկոսը՝ տրանսպորտային միջոցները, 7.5 տոկոսը՝ մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմները:

2012թ. հունվար-մարտին բոլոր ապրանքախմբերի գծով առևտրային հաշվեկշիռը բացասական է:

**Արտահանման և ներմուծման ծավալների դինամիկան
ըստ ապրանքախմբերի**

/հազ. ԱՄՆ դոլար/

Ապրանքային խմբի անվանումը	Արտահանում			Ներմուծում		
	2011թ. հունվար-մարտ	2012թ. հունվար-մարտ	Աճի տեմպը, տոկոս	2011թ. հունվար-մարտ	2012թ. հունվար-մարտ	Աճի տեմպը, տոկոս
Ընդամենը	19253.4	11485.1	59.7	58866.0	62124.6	105.5
<i>այդ թվում՝</i>						
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	223.1	255.3	114.4	2926.3	2693.5	92.0
Բուսական ծագման արտադրանք	301.0	459.4	152.6	3581.4	4203.8	117.4
Յուղեր և ճարպեր	-	-	-	598.6	532.8	89.0
Պատրաստի սննդի արտադրանք	1045.6	1355.2	129.6	9409.0	11089.1	117.9
Հանքահումքային մթերքներ	15289.1	6433.7	42.1	12767.4	12285.8	96.2
Քիմիական արտադրության ապրանքներ	-	24.1	-	4007.0	3429.9	85.6
Պլաստմասսա, կաուչուկ, ռետին	4.6	87.1	18.9 անգ	784.8	490.6	62.5
Կաշի և դրանից իրեր	2.2	4.5	2.0 անգ	43.4	216.5	5.0 անգ
Փայտ և փայտյա իրեր	32.1	259.9	8.1 անգ	337.8	418.3	123.8
Թուղթ և թղթյա իրեր	-	-	-	219.0	392.2	179.1
Մանածագործական իրեր	78.3	22.1	28.2	1750.9	2183.0	124.7
Կոշիկներ, հովանոցներ, գլխարկներ	571.6	257.1	45.0	417.5	467.6	112.0
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	120.9	39.9	33.0	2053.4	2610.8	127.1
Ապակի և դրանից իրեր	743.8	1701.5	2.3անգ	679.5	1860.0	2.7 անգ
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	614.1	257.3	41.9	1875.5	1576.0	84.0
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	158.4	144.5	91.2	5878.4	4669.3	79.4
Տրանսպորտային միջոցներ	9.8	147.4	15.0 անգ	6373.3	8668.8	136.0
Սարքեր և ապարատներ	-	-	-	64.6	122.0	188.8
Կահույք, խաղալիքներ, այլ պատրաստի իրեր	58.8	36.1	61.4	5097.9	4213.7	82.7
Արվեստի ստեղծագործություններ, հնաոճ իրեր	-	-	-	0.3	0.9	3.0 անգ.

Նախորդ տարվա հունվար-մարտի նկատմամբ արտահանման ծավալի աճի առավել բարձր ցուցանիշ է գրանցվել հետևյալ ապրանքախմբերի գծով՝ պլաստմասսա, կաուչուկ, ռետին՝ 18.9 անգամ, տրանսպորտային միջոցներ՝ 15.0 անգամ, փայտ և փայտյա իրեր՝ 8.1 անգամ, թանկարժեք քարեր և մետաղներ՝ 2.3 անգամ, կաշի և դրանից իրեր՝ 2.0 անգամ, բուսական ծագման արտադրանք՝ 52.6 տոկոսով: Միևնույն ժամանակ նվազել է մանածագործական իրեր՝ 71.8 տոկոսով, քարից, գիպսից, ցեմենտից իրեր՝ 67.0 տոկոսով, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ 58.1 տոկոսով, հանքահումքային մթերքներ՝ 57.9 տոկոսով, կոշիկներ, հովանոցներ, գլխարկներ՝ 55.0 տոկոսով ապրանքախմբերի արտահանումը:

Ներմուծված ապրանքախմբերից զգալիորեն աճել են կաշի և դրանից իրերը (5.0 անգամ), արվեստի ստեղծագործություններ և հնաոճ իրերը (3.0 անգամ), թանկարժեք քարեր և մետաղները (2.7 անգամ), սարքեր և ապարատները (88.8 տոկոսով), թուղթ և թղթյա իրերը (79.1 տոկոսով), տրանսպորտային միջոցները՝ (36.0 տոկոսով):

4.2.2. Մարդասիրական օգնություն

Ըստ ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության տվյալների՝ 2012թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում մարդասիրական օգնության կարգով Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն են ներմուծվել 36239.5 հազ. դրամի ապրանքներ: Ստացված մարդասիրական օգնության 96.4 տոկոսը կազմել են դեղորայք և բժշկական տարբեր ապրանքները, 2.2 տոկոսը՝ տարբեր տեսակի ապրանքները, 1.4 տոկոսը՝ ապարատներ և սարքերը:

ԼՂՀ ներմուծված մարդասիրական օգնության ծավալն ըստ առանձին ապրանքախմբերի

	2011թ. [#] հունվար-մարտ	2012թ. հունվար-մարտ	Աճի տեմպը (%)
Ընդամենը	94271.5	36239.5	38.4
<i>այդ թվում՝</i>			
Փայտեղեն և նրանից պատրաստված արտադրանք, հատ	1524.3	-	-
Հագուստեղեն, գլխարկներ, հովանոցներ, հատ	25.4	-	-
Նախկինում օգտագործված կոշիկ, հատ	204.7	-	-
Նախկինում օգտագործված հագուստ, հատ	3405.1	-	-
Տարբեր տեսակի գուլյաներ և գուգագուլյաներ, գույգ	10.5	-	-
Ապարատներ և սարքեր, հատ	8926.0	496.9	5.6
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ, հատ	1049.7	-	-
Գեղորայք և բժշկական տարբեր ապրանքներ	32070.3	34939.1	108.9
Չանագան արդյունաբերական ապրանքներ, հատ	43487.0	-	-
Չանագան շինանյութեր, հատ	435.1	-	-
Տարբեր տեսակի ապրանքներ, հատ	3133.4	803.5	25.6

2012թ. հունվար-մարտին 2011թ. հունվար-մարտի համեմատ մարդասիրական օգնության ծավալը նվազել է 61.6 տոկոսով: Մարդասիրական օգնությունը ստացվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Հոլանդիայից և Հայաստանի Հանրապետությունից:

ԼՂՀ ներմուծված մարդասիրական օգնության ծավալն ըստ երկրների

	Արժեքը, հազ. դրամ		Տեսակարար կշիռը, %	
	2011թ. [#] հունվար-մարտ	2012թ. հունվար-մարտ	2011թ. հունվար-մարտ	2012թ. հունվար-մարտ
Ընդամենը	94271.5	36239.5	100.0	100.0
<i>այդ թվում՝</i>				
ԱՄՆ	75047.7	29443.1	79.6	81.2
Հոլանդիա	8876.6	4412.7	9.4	12.2
Միացյալ Արաբական Էմիրություն	5649.1	-	6.0	-
Ի Ի Հ	3942.1	-	4.2	-
Գերմանիա	756.0	-	0.8	-
Հայաստանի Հանրապետություն	-	2383.7	-	6.6

* տվյալները ճշտվել են ըստ վարչական հաշվետվության

Մարդասիրական օգնության ծավալների դինամիկան (հունվար-մարտին), ըստ տարիների, հազ.դրամ

